APAGA

Quarterly

آپاگا

فصلنامه

فصلنامه فرهنگی – اجتماعی مطالعات شرق شناسی ، ایرانشناسی و ارمنی شناسی

An International Journal of Oriental Studies

ISSN 1682-5438

شماره ۱۰۰ زمستان (اسفند) ۱۴۰۳

No. 100, Մարտ, 2025

ԱՊԱԳԱ

Հանդես

APAGA

Quarterly

Հայ-իրանական մշակութային եւ հասարակական եռամսյա հանդես

An International Journal of Oriental Studies

ISSN 1682-5438

Համար 100 Մարտ, 2025 թ.

No. 100 March 2025

ԱՊԱԳԱ Համար 100 Մարտ, 2025 APAGA

No. 100,March, 2025

Հայ-իրանական մշակութային եւ հասարակական միջազգային եռամսյա հանդես

An international Quarterly Journal of Oriental studies

Արտոնատեր, Հրատարակիչ եւ Գլխավոր խմբագիր

License-holder, Publisher & Editor-in-Chief

Էդ. Բաղդասարյան / Ed. Baghdasarian,

Փոստարկղ համար 15875-9488 Թեհրան-Իրան

POBOX No. 15875-9488 Tehran – Iran

WEB: www.ApagaOnline.com and www.apagamonthly.4t.com

E-mail: apaga98@hotmail.com **ISSN 1682-5438**

Բովանդակություն

Հայերեն Ակնարկ Հյաոց ցեղասպանության

Անգլերեն Թուրքիայի Ծածուկ հայերի խնդիրը

Պարսկերեն Հայկական վրեժ;նդրության պատմությունից և…

Contents

Armenian A short history of the Armenian genocide

English The question of hidden Armenians

Persian About Armenian revenge and witnesses of Armenian Genocide

- Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել խմբագրության տեսակետներին:
- Արտատպության դեպքում հղումը «Ապագա»-ին պարտադիր է:
- Ստացված հոդվածները չեն գրախոսվում և չեն վերադարձվում:

Subscriptions: $ 20 per year Գինը 10000 ռիալ

آپاگا فصلنامه بین المللی ایرانشناسی و ارمنی شناسی

شماره ۱۰۰ زمستان ۱۴۰۳

صاحب امتیاز و مدیر مسئول

ادیک باغداساریان

صندوق پستی شماره ۹۴۸۸-۱۵۸۷۵

تهران - ایران

نشانی اینترنت www.ApagaOnline.com و www.apagamonthly.4t.com

پست الکترونیکی **apaga98@hotmail.com**

ISSN 1682-5438

فهرست

فارسی شمه ای از انتقامجویی ارمنیان و گواهان نژادکشی

ارمنی مروی تر تاریخ نژادکشی ارمنیان

انگلیسی در باره مساله ارمنیان مسلمانشده در ترکیه

مقالات و دیدگاه های مندرج در نشریه لزوما" بیانگر موضع "آپاکا" نیست.

نشریه در حک و اصلاح مقاله ها مجاز است.

مقالات و مطالب رسیده باز گردانده نمی شود.

استفاده از مطالب "آپاگا" با ذکر ماخذ آزاد است.

شمارگان ۱۰۰ بها ۱۰۰۰۰ تومان

چاپ احسان-تهران چهارراه ولیعصرپلاک ۱۱۴۸

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Դոկտ. Էդ. Բաղդասարյան
(Էդ.Գերմանիկ)

(ԱՊՐԻԼՅԱՆ ԵՂԵՌՆԻ ԱՌԻԹՈՎ ՏՐՎԱԾ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԻՑ)

Նախաբան

Իր բազմադարյան պատմության ընթացքում գոյատևման, սոցիալական և ազգային ազատագրության, իր լավ ապագայի համար մաքառումների դաժան ուղի է անցել, օրհասական պահեր է ապրել հայ ժողովուրդը: Նա առանձնապես ծանր փորձության ենթարկվեց, մեծագույն ողբերգություն ապրեց առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմի դժնդակ տարիներին:

Մեր այսօրվա խոսքը ամփոփվում է հետևյալ գլուխներում՝

1-Ովքեր են հայերը

2-Ովքեր են թուրքերը

3-Հայերի դերը օսմանական թուրքիայում

4- Հայկական կոտորածների պատմությունից

5- Մեծ եղեռն

6-Մեծ եղեռնի դրդապատճառներն ու պատասխանատուները

7-Հայկական վրեժխնդրության պատմությունից

8-Վերջաբան

1- Ովքեր են հայերը

Հայերը, որպես էթնիկական կազմավորում, առաջացել են հնդեվրոպական ընդհանրական լեզվի տրոհման հետևանքով: Եթե մինչև վերջերս հնդեվրոպական լեզվաընտանիքի հայրենիքը համարվել է կենտրոնական Եվրոպան, ապա ըստ նորագույն ուսումնասիրությունների այն տեղադրվում է Հայկական լեռնաշխարհում, նրան հարակից Հյուսիսային Միջագետքում, Փոքր Ասիայի արևելյան և Իրանական բարձրավանդակի հյուսիս արևմտյան մասերում: Այդ բնակավայրերում տակավին նոր քարի

(նեոլիթ-մթա 7-5 հազարամյակ **)** դարաշրջանում կատարվել է հնդեվրոպական լեզվով խոսող ցեղերի տրոհումն առանձին լեզվաբարբառների, ապա ցեղակից լեզուների: Մարդաբանական ուսումնասիրությունների համաձայն, այդ ժամանակաշրջանից Հայկական լեռնաշխարհը բնակեցված է եղել արմենոիդ տիպին պատկանող ցեղերով: Այդ բնորոշ տիպի կրողը ներկայումս հայ ժողովուրդն է: Նեոլիթյան դարաշրջանից էնեոլիթին**(**պղնձաքար) անցման ժամանակաշրջանում(մ.թ.ա.5-4 հազարամյակը ներառյալ) հնդեվրոպական ցեղերի մի մասը տեղաշարժվելով Հայկական լեռնաշխարհից ու Փոքր Ասիայից տարածվել են Եվրոպա, Միջին Ասիա ու Հնդկաստան,մյուս մասը (այդ թվում՝ խեթական, հայկական և իրանական ցեղերը) մնացել են նախահայրենիքի տարածքում: Այս բոլորը վկայում են հայերի տեղաբնիկության մասին:

2-Ովքեր են թուրքերը

Թուրքական ցեղի ծագման պրոցեսի ժամանակագրական ելակետը, որը ի վերջո հանգեցրեց թուրք ժողովրդի կազմավորմանը, վստահորեն կարելի է համարել 11-րդ դարի վերջը, երբ սկսվել էր թրքական ցեղերի, գերազանցապես օղուզների և թուրքմենների զանգվածային գաղթը դեպի Փոքր Ասիա: - Հետևաբար, թուրքերի ծագումը, թուրք ժողովրդի կազմավորումը տեղի է ունեցել ուշ միջնադարի շրջանում(12-15րդ դդ.),

որը համեմատաբար լավ լուսաբանված է բանավոր աղբյուրներում: ՈՒրեմն՝ թուրք ազգության կազմավորումն ավարտվել է 15-րդ դարում: Նրանք ձևավորվել են Միջին Ասիայից Փոքր Ասիա գաղթած 11-13դդ. թուրքական քոչվոր անասնապահական ցեղերի և տեղաբնիկների միախառնումից: Թուրքերի մի մասը (ուզեր,պեչենեգներ) Փոքր Ասիա է թափանցել Բալկաններից, ձուլել տեղացի մի շարք ժողովուրդների, ընդունել և յուրացրել նրանց նյութական և հոգևոր մշակույթի տարրերը: 13-րդ դ., խույս տալով մոնղոլական արշավանքներից, Միջին Ասիայից և Իրանից Անատոլիա թափանցեցին բազմաթիվ թուրքական (հիմնականում թուրքմեններ)և ուրիշ ցեղեր: 15-րդ դ. թուրքերը գրավեցին Փոքր Ասիան և միավորեցին թուրքական ցեղերը, տեղաբնիկների (հայեր, հույներ, արաբներ) մի մասը ոչնչացվեց, մնացածը ձուլվեց: 15-16դդ. թուրքերը չունեին միասնական ցեղանուն, դրան փոխարինում էր դավանական մուսուլման անվանումը:

Դեռևս 19-դ. 30-ական թթ. Թուրքիայում 7 միլիոն թուրքերից բացի բնակվում էին 2 մլն.-ից ավելի հայեր,մոտ 2 մլն. քրդեր, 1-1.5մլն. հույներ, ինչպես նաև աջարներ, հրեաներ,ալբանցիներ, բոսնիացիներ, խորվաթներ, որոնք կազմում էին բնակչության 45%-ը: Առ այսօր շարունակվում է համշենցիների (մեծ մասամբ՝մահմեդականացած հայեր) միաձուլումը: 20դ.սկզբին ձևավորվեց թուրքական ազգը: Էթնիկական ողջ ընթացքում նրանց մշակույթն ու լեզուն ներառել է հունական, հայկական, վրացական, բալկանյան ժողովուրդների լեզվական և մշակութային տարրեր: Թուրք ազգը ձևավորվելու համար հարկավոր էր մյուս ազգությունները ոչնչացվեին:

3-Հայերի դերը Օսմանական Թուրքիայում

Օսմանական պետության ստեղծումից հետո, հայերը մյուս ազգերի թվում մտան նրա լծի տակ և ունեցան իրենց յուրահատուկ դերը այդ կայսրության զանազան ասպարեզներում:Այժմ հարկ ենք համարում հպանցիկ ակնարկ ունենալ այդ կապակցությամբ:

Օսմանական պետության բարձրաստիճան իշխանությունները հայերն էին: Նրանցից կարելի է հիշատակել Ամիր - Սեղբոսին, Ամիր Շնորհքին (1720թ. մի քանի հայկական դպրոց հիմնեցին Կ. Պոլսում) , Ամիր Ապրահամ (1824թ. հիմնեց առաջին տպարանը Թուրքիայում), Հովհաննես Դոզյան և Մկրտիչ Ջազայերլյան (մաքսատները բոլորովին նրանց էին հանձնված):

1795 թվականից ի վեր զինամթերքի շտեմարանի տնօրինությունը սերնդեսերունդ Տատյան ընտանիքին էր պատկանում:Թղթադրամի տպագրումը պատկանում էր Դոզյաններին ու (Հարություն) Բեզեճյաններին:

Երբ 1828թ. ռուսական զորքը մոտեցել էր Կ. Պոլսի դարպասներին և 15մլն.ռուբլի ավար էր պահանջում՝ Սուլթան - Մահմուդը անճարակությամբ դիմում է Ամիր Բեզեճյանին , որովհետև պետությունը ի վիճակի չէր վճարելու, ուստի նա հոգում է այդ գումարը: Նրա մահվան առիթով Սուլթանը խիստ հուզվելով, արքունական կազմով սև հագած մասնակցում է նրա հուղարկավորությանը:

Հովհաննես Տատյանը Բարձր Դռան կողմից նշանակվել էր թղթի, մետաքսի և պայթուցիկների գործարանների տնօրեն: (1856թ.) հետո նաև կաշվի, կտորի և մետաղի ձուլարանի տնօրեն:

Հնուց կայսրության շինարարական և ճարտարապետական աշխատանքները վստահվել էին Սարվարյաններին, հետո նաև Բալյաններին:

Այսուհանդերձ թուրքական իշխանությունը չէր ցանկանում բոլոր գործերը հանձնել հայերին, ուստի նրանց համար թուրք կառավարիչներ էր նշանակում, հատկապես բանակում և ներքին գործերի նախարարությունում:

Պետության գանձապահության պաշտոնը միշտ էլ հայե-

րին էր տրվում, օրինակ `Հակոբ Քազաղյանը, Միքայել Պորթուգալյանը և Հովհաննես Սաքըրզ փաշան գանձապահության նախարարներ էին:

Գրիգոր Էֆենդին փոստի, հեռագրի և շինարարության նախարար էր նշանակվել 1864թ.:

Բժշկական և այլ համալսարանները հայերին էին վստահում (օրինակ Նիկողայոս Ռուսինյան, Անդրանիկ Խանդումյան, Ստեփան Ասլանյան, Թրեզյան, Միհրան Գարագաշ, Հակոբ Բոյաճյան):

Հաշվապահության հիմնադիրներն են եղել Կարապետ Խդրյանն ու Գոյումճյանը:

Առևտրի հիմնադիրները Ջուղայի հայ վաճառականներն են եղել:

Հարություն փաշա Տատյանը երկար ժամանակ արտգործնախարարության գործակատարն է եղել:

Արհեստներն ու առևտուրը մեծ մասամբ հայերին էր պատկանում, օրինակ՝ Կ. Պոլսի ոսկերիչների շուկան միանգամայն հայերի ձեռքում էր: Երկրի ներածումները՝ հույների, իսկ արտահանումները՝ հայերի մենաշնորհն էր:

Գեղարվեստի զանազան բնագավառներում հայկական դեմքերն էին փայլատակում, որոնց հիշատակելու համար մեծ համբերություն է պահանջվում :

Այսուհանդերձ թուրքերը իրականում չէին վստահում հայ տարրերին, օրինակ՝երբ 1826թ. հայերը քսան նավերով հատուկ հանդիսությամբ սահմանադրությունը շնորհավորելու համար գնում են Կ. Պոլսի նահանգապետ Ալի փաշայի մոտ, վերջինս իր մերձականերին այսպես է արտահայտում.«Ես հայերից վախենում եմ, նրանք ծածուկ աշխատանք են տանում և մոտ հարաբերություն ունեն ժողովրդական մասսաների հետ և հեռու չեմ գտհում այն պահը, երբ նրանք միանալով թուրք

տարրերին, Օսմանական պետության դեմ ապստամբեն»:

4-Հայկական կոտորածների պատմությունից

Ինչպես քիչ առաջ անդրադառնանք, հայկական տարրի ոչնչացումը հատկապես սկսվել է 15դ.-ից, սակայն, երբ հայ ազատագրական պայքարը նոր կազմակերպված հիմքերի վրա դրվեց, և հայ ժողովուրդը ազգային զարթոնք ապրեց՝ հայկական կոտորածները կազմակերպված և ծրագրված կերպով նոր թափ ստացան հատկապես 19-դարի երկրորդ կեսից:

Ի նկատի ունենալով մեր խոսքի ժամանակի սահմանները, ստորև տալիս ենք հայկական կոտորածների նորագույն շրջանի ժամանակագրությունն ու կոտորածների թիվը.

No.	թվականը	վայրը	Քանակը (մարդ)
1	1860	Լիբանան	12,000
2	1876	Բուլգարիա	14,000
3	1877	Բայազետ	1,400
4	1879	Ալաշկերտ	1,250
5	1881	Ալեքսանդրիա	2,000
6	1892	ներքին Թուրք.	3,500
7	1894	Սասուն	12,000
8	1895	Արևմտահայաստան	300,000
9	1846	Կոստանդնապոլիս	9,570
10	1903	Մակեդոնիա	14,667
11	1904	Սասուն	5,640
12	1909	Կիլիկիա	30,000
13	1915	Թուրքիա և Արևմտահայաստան	1,500,000
14	1918	Կարս Արդանան	50,000

15	1918	Բաքու և շրջակայք	30,000
16	1919	Կիլիկիա և շրջակայք	60,000
17	1921	Հաճըն	20,000
18	1922	Զմյուռնիա	10,000
		Ընդամենը (1860թ.- 1922թ.)	2,284,027

(New York tims,Աշխարհի ահաբեկչությունները և կոտորածները: Էջ396)

5- Մեծ եղեռն

Արևմտահայության Ֆիզիկական բնաջնջման իր հրեշավոր ծրագրերը թուրքական բռնակալությունը մշակել է դեռևս անցյալ դարի վերջերին: Սակայն այդ քաղաքականությունն ավելի լայն չափերով իրագործվեց երիտթուրքերի կառավարման տարիներին:

Դեռ 1914թ. աշնանը և 1915թ. սկզբներին թուրքական իշխանություններն սկսեցին հատվածաբար ոչնչացնել բանակ զորակոչված հայերին, ապա նաև ճանապարհների վրա աշխատեցնելու պատրվակով զորահավաքի ենթարկված 15-20 և 45-60 տարեկան տղամարդկանց:Օգտագործելով պատերազմական իրադրությունը, իթթիհատականները 1915թ. սկզբներին կայացած իրենց կուսակցության կենտկոմի գաղտնի նիստում որոշեցին արևմտահայության բնաջնջման և տեղահանության կոնկրետ եղանակները:

Թալեաթի նախագահությամբ գումարված գաղտնի նիստում, որին մասնակցում էին Էնվերը, Նազըմը , Բեհաեդդին Շաքիրը և ուրիշներ, հանդես գալով որպես հիմնական զեկուցող կոմիտեի քարտուղար Նազըմը կոչ էր անում չբավարարվել Ադանայի կոտորածի նման մասնակի ջարդերով. «-Պետք է հայ ազգը արմատախիլ լինի, մեր հողի վրա մի անհատ

անգամ չմնա, հայ անունը մոռացվի: Հիմա պատերազմի մեջ ենք, սրանից հարմար առիթ չի գտնվի, մեծ պետությունների միջամտությունը և թերթերի բողոքի ձայնը նկատելի իսկ չի կարող լինի, լինելու պարագային խնդիրը կատարված մի իրողություն կդառնա և կփակվի, այս անգամվա գործողությունը բնաջնջումի մի գործողություն պիտի լինի, մի հայ անհատ իսկ չմնալու պայմանով բնաջնջումը անհրաժեշտ է»:

Այսպես, ապրիլի 15-ին տեղական իշխա-նություններին - Թալեաթի, Էնվերի, և Նազըմի ստորագրությամբ գաղտնի հրաման ուղարկվեց, որտեղ ասված էր, թե օգտվելով պատերազմի ընձեռած հնարավորությունից, անհրաժեշտ է վերջնականապես բնաջնջել հայերին՝ նրանց քշելով դեպի Արաբիայի անապատները:

Դահիճները առաջին հերթին հաշվեհարդար տեսան հայ ականավոր գործիչների ու մտավորականների, այդ թվում մեջլիսի հայ պատգամավորների հետ: Միայն Կ. Պոլսում ապրիլի 24-ի լույս 25-ի գիշերն ոստիկանությունը ձերբակալեց 235 անվանի հայ մտավորականների: Շուտով ձերբակալվածների թիվը հասավ շուրջ 800-ի, որոնք քշվեցին դեպի Անատոլիայի խորքերը և գազանաբար սպանվեցին աքսորի ճանապարհին: Կ.Պոլսի նահատակված հայ մտավորականների թվում էին Գ.-Զոհրապը, Դանիել Վարուժանը, Սիամանթոն, Ռ. Զարդարյանը, Ռ.Սևակը, Հովի.Թլկատինցին, Հրանդը, Երուխանը և շատ շատ ուրիշներ: Հանճարեղ Կոմիտասը պատահաբար փրկվելով մահից և ականատես լինելով հայ ժողովրդի մեծագույն այդ ողբերգությանը՝ կորցրեց բանականությունը:

Երիտթուրքերի կառավարությունը 1915թ. հունիսի 15-ին Կ.Պոլսի սուլթան Բայազիտի հրապարակում կախաղան բարձրացրեց հինչակյան կուսակցության 20 ղեկավարների (-Փարամազ, դոկտ. Պենե, Վանիկ, Ա.Աչքպաշյան և այլն):

Թալիաթի ստորագրությամբ մի գաղտնի կարգադրություն է հղվում վիլայեթների իշխանություններին, ուր ասվում էր, որ բնաջնջել անհրաժեշտ է Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի

ողջ հայ ազգաբնակչությունը. «Կառավարությունը իր վրա է վերցնում ամբողջ պատասխանատվությունը և հրամայում է չխնայել անգամ օրորոցի երեխաներին»:

Տեղական իշխանությունները մեծագույն ճշտությամբ էին կատարում Թալեաթի բոլոր կարգադրությունները: Այսպես 1915թ. ապրիլ-մայիսին տեղահան արվեցին Կիլիկիայի հայերը, հունիս-հուլիսին՝ Կարինի, Տրապիզոնի, Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Սվազի, օգոստոս-սեպտեմբերին՝ Անկարայի, Ադաբազարի, Բրուսայի, Ջեբել Մուսայի, Ուրֆայի և Այնթապի հայերը:

Հայերի աքսորը դեպի Դեյր-էզ-Զոր (աղավաղված՝ Տեր - Զոր) քաղաքի շրջակա տոթակեզ անապատը և զանգվածային ջարդը միևնույն եղանակով և միաժամանակ իրականացվեց Թուրքիայի ավելի քան 50 վայրերում:

Աքսորից առաջ տղամարդկանց բաժանում էին ընտանիքներից ու ոչնչացնում: Գեղեցիկ կանանց ու աղջիկներին բռնի կերպով առանձնացնում էին՝ մեծահարուստ թուրքերի հարամներն ուղարկելու համար: Ապա սովահար հոծ զանգվածներին քշում էին Անատոլիայի լեռնաքնցքներով, կիզիչ արևի ճառագայթների տակ՝ դեպի միջագետքի անապատները: Հազարավոր հայեր ճանապարհին մահանում էին սովից, ծարավից, ուժասպառությունից: Նրանք՝ ովքեր այլևս անկարող էին առաջ շարժվել, անմիջապես սվինահարվում էին:

Այս աքսորյալներից շատ քչերն էին տեղ հասնում. օրինակ՝ Սեբաստիայից և Խարբերդից աքսորված 18000 հայերից աքսորավայր են հասել 150 կին և երեխա. Հալեպից Ռես-յուլ Այն և Մերսենի ճանապարհով աքսորված 20000 հայերից կենդանի մնացին 5000 հոգի: Կարինի վիլայեթի 215000հայ ազգաբնակչությունից կենդանի մնացին ընդամենը 2000, իսկ - Կարին քաղաքի 18000 հայերից՝ 120 մարդ:

Հայկական կոտորածներն ոչ միայն տեղի էին ունենում հայկական վիլայեթներում ու Թրակիայում և այլ տեղերում

բնակվող հայերի նկատմամբ:

Հայերին գլխովին չաքսորեցին միայն երկու քաղաքներից՝ Կ. Պոլսից ու Զմյուռնիայից:

Այսպիսով, 1915- 1918 թթ ընթացքում երիտթուրքական կառավարության կողմից ձեռնարկված հայաջինջ գործողությունների հետևանքով մոտ երկու միլիոն հայեր աքսորվեցին, որոնցից մեկ ու կես միլիոնից ավելին սպանվեց կամ զոհ գնաց սովին ու համաճարակին Միջագետքի անապատներում: Բռնի թուրքացման ենթարկվեցին շուրջ 200000 հայեր, գերազանցապես կանայք ու երեխաներ:

Երտթուրքերը գազանային եղանակով «լուծեցին» հայկական հարցը: Մեծ եղեռնից հետո արյունարբու Թալեաթ փաշան պաշտոնապես հայտարարեց՝ «չկա այլևս հայկական հարց, քանի որ չկան նաև հայեր»:

1916թ. Լոնդոնում հայկական հարցի կապակցությամբ տեղի ունեցած բանակցություններին հայ ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշայի առաջարկը՝ կոտորածներից ազատված հայ տարագիրներից Արևելյան լեգեոն ստեղծելու մասին, հավանություն գտավ Ֆրանսիայի (-Ժորժ Պիկո) և Անգլիայի (Մայքըլ Սայքս) կողմից:

1916թ. նոյեմբերի 28-ին Ֆրասիայի կառավարությունը որոշեց հայ տարագիրներից կազմավորել այդ լեգեոնը.Այդ լեգեոնի ընդհանուր թիվը 1918թ. մայիսին կազմում էր 5662 զինվոր, որից 400-ն էին սիրիացիներ, մնացածը հայեր էին: Նրանք առաջին անգամ պատերազմական գործողություններին մասնակցեցին միայն 1918թ. սեպտեմբերի 19-ին Պաղեստինի ճակատում:

Հնչակյանների, ռամկավարների և դաշնակ-ցականների ղեկավարները հուսադրվելով իմպերիալիստական Ֆրանսիայի պետական գործիչների խաբեբա ճառերից, 1920թ.օգոստո-

սի 3-ին Ադանայի մոտակայքում,յուրաքանչյուրը առանձին-առանձին «Միջագետքի հանրապետություն» հռչակեցին, իսկ Ադանայում օգոստոսի 4-ին Միհրան Տամատյանի նախագահած Ազգային գերագույն խորհուրդը «Ֆրանսիական հովանավորության տակ ինքնավար Հայաստան հռչակեց»: Այդ հանրապետություններից երկուսը առաջին իսկ օրը,իսկ երրորդը՝ երրորդ օրը վերացվեցին Ֆրանսիական զորամասերի կողմից:

Սկսված անգլո-Ֆրանսիական հակասությունների պայմաններում Ֆրանսիան հակվեց դեպի Թուրքիան: 1921թ. հոկտեմբերի 20-ին Անկարայում Ֆրանսիայի և Քեմալական - Թուրքիայի միջև կնքվեց պայմանագիր, որով Ֆրանսիան իր զորքերը հեռացրեց Կիլիկիայից: Այսպիսով՝ ինչ որ իթթիահատականներին չհաջողվեց անել Մեծ եղեռնի օրերին, հինգ տարուց հետո հաջողվեց կատարել քեմալականներին:Այդ երկրորդ ցեղասպանությունը, որին զոհ գնացին 30000-ից ավելի կիլիկիահայեր, այս անգամ կատարվեց մեծ պետությունների թողտվությամբ: Կիլիկիան ևս դատարկվեց հայությունից:

6-Մեծ եղեռնի դրդապատճառներն ու պատասխանատուները

Մեծ եղեռնի առաջացման գլխավոր պատճառները կարելի է ամփոփել հետևյալ կերպով.

1-Թուրքական ազգի ձևավորման պրոցեսի անբաժա-նելի մասն էր կազմում հայերի ուծացումն ու ոչնչացումը:

2-Եվրոպայի իմպերիալիստական պետությունների համար առիթ էր ծառայում «հայկական հարցն» ու հայերի գոյությունը թուրքական իշխանության տերիտորիայում, որով նրանք կարողանում էին միջամտել թուրք պետության գործերին: Կոտորածների ծրագրի շնորհիվ միանգամայն վերանում էր այդ հարցը:

3-Հայկական գլխավոր կոտորածները ծրագրվեցին մասոնական կազմակերպությունների միջոցով, որպեսզի հայերի

ոչնչացումով հրեաների ամենամեծ տնտեսական մրցակիցը կանգ առնի գոյություն ունենալ: Հայտնի է, որ թե օսմանական ժամանակաշրջանի , և թե իթթիհատական և քեմալական ղեկավարները կամ ծագումով մասոնական հրեաներ էին, և կամ թուրք մասոնականներ (օրինակ՝ Թալեաթ փաշան, Քեմալ Աթաթուրքը, փրինս Ահմադ քեմալ էդդին ԷՖենդի և - Նուրէդադին ԷՖենդի՝ Սուլթան Աբդուլ Մաջիդի զավակները, Մուսթաֆա Ռաշիդ փաշա, օսմանական վարչապետ և այլն):

4-Հայերը և հայ ազատագրական պայքարը մեծ խոչնդոտ էին համարվում պանթուրքական զավթողական ծրագրերի իրականացման դեմ,որի իսկական հրահրողներն էին Գերմանիան, Անգլիան և Ֆրանսիան (իհարկէ տարբեր ժամանակաշրջաններում). Հայկական ազատագրական պայքարն ու արևմտահայերը առհասակ ռուսական հակում ունեին, որը չէր համընկնում արևմտյան երկրների շահերին:

5-Օսմանական նախկին երկրների անկախացումը (Բուլգարիա, Հունաստան և բալկաններ) այդ պետությանը պարտադրեց ուշադրություն դարձնել արևելյան սահմաններին և ճնշել հայկական շարժումները:

6-Հայկական անհեռատես և արկածախնդրական զինյալ գործողությունները:

Հայկական կոտորածների իսկական պատասխա-նատուները հետևյալներն են.

1-Գերմանական,Ավստրո-հունգարական, Անգլիական, Ֆրանսիական և Ցարական պետությունները:

2-Համաշխարհային գաղտնի կազմակերպությունները, որոնց ճիրանների մեջ են գտնվում իմպերիալիստական պետությունները:

3-Օսմանական, իթթիհատական և քեմալական պետությունները:

1919թ. մարտի 8-ին սուլթան Մեհմեդ 6-րդ Վահիդեդդինի (1918-1922) հատուկ հրամանով, երիտթուրքական կուսակցական պարագլուխներն ու նախարարները հանձնվում են Կ.-Պոլսի ռազմական արտակարգ ատյանի քննությանը: Այս դատաքննությունների ընթացքում հեռակա կարգով մեղադրվում են 10 իսկ դատավարությանը ներկա 20 կուսակցական և պետական բարձրաստիճան գործիչներ:

Հեռակա կարգով դատի տրված մեղադրյալներն էին.

1-Թալեաթ փաշա - ներքին գործ. նախարար, մեծ վեզիր (1917-1918):

2-Էնվեր փաշա - ռազմական նախարար

3-Ջեմալ փաշա- ծովային

4-Բեհաէդդին Շաքիր Բեյ- երիտ.թուրք.կուսակցության կկ անդամ «Թեշքիլաթ-ը Մախսուսե»-ի նախագահ

5-Դոկտ. Նազըմ Բեյ- կուսակց. կկ անդամ, հանրակրթական նախարար:

6-Ջավիդ բեյ- Ֆինանսների նախարար:

7-Սուլեյման Էլբիստանի բեյ- հողագործության առևտրի նախարար (1915-1917):

8-Մուստաֆա Շերեֆ բեյ- հողագործության և առևտրի նախարար:

9-Օսկան Էֆենդի- փոստի և հեռագրատան նախարար (1914-1917):

10-Դոկտ. Ռուզուհի Էֆենդի- կուսակց. կկ անդամ:

11-Ազիզ Էֆենդի- հասարակական անվտանգության նախարար:

7-Հայկական վրեժխնդրության պատմությունից

Հայոց մեծ ողբնի թուրք կազմակերպիչները զերծ չմնացին հայերի վրեժխնդրությունից և հայկական գնդակների թիրախը դարձան ըստ հետևյալի.

1-Էնվեր փաշան 1922թ. Թաշքենդում սպանվեց հայազգի Հակոպ Մելկոնովի դեմ պատերազմում:

2-Ջեմալ փաշան 1922թ. Թիֆլիսում Պետրոս Տ.Պողոսյանի և Արտաշես Գևորգյանի միջոցով:

3-Խան Խոյսկին՝Ադրբեջանի վարչապետը1920թ. Արամ Երկանյանի ձեռքով:

4-Աբբաս Բեգովը 1920թ. Երկանյանի ձեռքով:

5-Թալեաթ փաշան 1921թ. մարտի 21-ին Բերլինում Սողոմոն Թեհլիրյանի ձեռքով:

6-Սաիդ Հալիմ փաշան 1921 դեկտ. 6-ին Հռոմում Արշավիր Շիրակյանի ձեռքով:

7-Բեհա էդդին Շաքիր բեյը 1922թ. ապրիլի 17-ին Բերլինում Արամ Երկանյանի ձեռքով:

8-Ազիմ փաշան 1922թ. ապրիլի 17-ին Բերլինում Արշավիր Շիրակյանի ձեռքով:

9-Բեհբուտխան Ջիվանշիրը՝ Ադրբեջանի ներք. գործ. նախարարը, 1931թ. հուլիսի 19-ին Կ.Պոլսում Միսակ Թորլակյանի ձեռքով:

8-Վերջաբան

Այսպիսով արևմտահայ ժողովուրդը կորցրեց իր Ֆիզիկական գոյությունը, իր գույքն ու ունեցվածքը, իր ազգային արժանիքները, իր հայրենիքը, ոչնչացման ենթարկվեցին 66 քա-

ղաքների ու 2500 գյուղերի հայ ազգաբնակչությունը, կողոպտվեցին ու քանդվեցին ավելի քան 2000 եկեղեցիներ ու վանքեր, 1500 դպրոցներ ու վարժարաններ: Օսմանյան Կայսրությունում միայն հայ ժողովրդին հասցված նյութական վնասը 1919թ. կուրսով կազմել է մոտ 15 միլիարդ Ֆրանկ:

Առաջին նամաշխարհային պատերազմի ավարտից հետո համաշխարհային հասարակության կողմից բողոքներ տեղի ունեցան, նրանց թվում էին՝ Ֆրանսիացի հնագետ-պատմաբան Ժակ դը Մորգանը, Գերմանացի հայագետ Յոզեֆ - Մարկվարտը, Յոհան Լեփսիուսը, Արմին Վեգները, Անտուան Մեյեն, Ֆրեդր. Մակլերը, Արնոլդ Թոյնբին, Վալերի Բրյուսովը, Հենրի Մորգնտաուն և շատ ուրիշներ:

Ով իմ զոհված հայ նահատակներ, ե՞րբ պիտի, նույնիսկ ձեր հոգին, ազատվի դարաշրջանի նենգություններից:

Հարգանք ձեր հիշատակին:

THE PROBLEM OF ISLAMIZED[1] ARMENIANS IN TURKEY

Ruben Melkonyan

The paper examines some details of the problem of Armenians in Turkey in the early 20th century, attempting to show a general view of the current situation. Also identified with regard to the issues of Armenians are the approaches of the scientific analytical community and the mass media, as well as individual elements of the official policies endorsed by the Turkish authorities.

In different centuries the Armenian nation was subject to various pressures and percecutions, as well as enforced Islamization. Invading the region, mostly Muslim conquerors had set an objective to Islamize the ethnic Christian majority, which turned out to become the corner stone of the policy administered by the state. Islamization of Armenians used to be enforced by a variety of techniques, including death threats, tax evasion charges and other legal persecutions [1, pp. 139-143, 187-188; 2, pp. 22-25]. Adopting the enforced Islam, that part of Armenians in the course of time by different reasons, willy-nilly distanced themselves from their mother roots and from their Christian compatriots, which eventually resulted in their partial or complete assimilation. It was also caused by the fact that both formerly and nowadays, the religious confession enjoys a priority over ethnic identity in the matter of differentiating the human individuals. Thus, the concepts of being Armenian and Christian have become identical to the exclusion of the concept of the Armenian apostasy. Orientalist Alexander Khachatrian noted in this connection: "Christianity for the Armenians is not only a confession, it is a world view, the base of the nation's existence. By this reason, apostasy in the Medieval Armenia was tantamount to state treason. To be converted to another religion meant to switch national identity. To be Christian, therefore Armeno-Gregorian was regarded as an attribute of Christianity. Apostacy therefore is qualified as defection and treachery" [3, p. 26].

It is a known fact that the mandatory Islamization of Armenians took place

[1] The term "Islamized Armenians" is used by the author to mention those Armenians, who were forcedly converted to Islam in the Ottoman Empire and Republic of Turkey *(ed.)*.

on a large scale following the invasion of the Turkic tribes to Asia Minor and Armenian Highland [4]. Regarded as an easy target for religious conversion were children, whose islamization at an early age facilitated annihilation of the newly emerging national and religious self-consciousness. That was the operational logic of a wide-spread and long-time children institution (devshirme) of the Ottoman Empire, another name of this institution being "Blood Duty" [5; 6, pp. 247-256]:

The Armenians, being one of the main non-Muslim nations of the Ottoman Empire, have been coming naturally from time to time under enforced Islamization, varying in scale at different times. It is, however, generally known that the latest large-scale action of Islamizing Armenians occurred during the Armenian genocide in 1915-23.

It will not be superfluous to note that for decades the domestic scholarly periodicals and communities have discussed the imperative of studying the Turkey-based Armenians being placed at different levels of alienation. Many experts have called for the research to be conducted on the issue, giving the appropriate substantiation. The problem of Armenians can be classified among the crucial issues of Armenian studies, requiring a relevant level of attention. On the other hand, both within the region and in Turkey in particular, in the context of different actions, the problem of Armenians can produce certain political repercussions. It is quite natural, that for quite some time already the study of this problem has been supported by great European powers, like Germany, having collected a significant bulk of sub-ethnic information on Eastern Turkey through the efforts by religious missions and similar structures. This issue has been also discussed by Ruben Safrastian, a renowned Turkologist, head of the Institute of Oriental Studies, in his latest interview, stating that "only recently did we start showing interest in Turkey living population that survived as a result of enforced Islamization and Turkish assimilation. However, efforts in this domain have been underway since the 1970s, mostly on the part of Germany-based evangelic organizations. Their general data are fairly well known, although a little obsolete. According to those data, the number of veiled Christians in Eastern Turkey reaches one million. There can be no doubt that most of them are Armenians" [7, pp. 111-112].

In the problem of the Turkey's Armenians and its interpretation (wheter they should be recognized as Armenians) there are different, often contradictory opinions in the Armenian specialized literature. Thus, the historian Karen Khanlarian noted: "…One who considers himself an Armenian, and is aware of his Armenian origin and routes, is Armenian, indisputably, no matter where he lives, what language he speaks, what his name is, or confession he was forced to accept.

With regard to this approach, we are confronted with the renewed

commitment to recognize the situation of our Armenian brothers residing now in Turkey" [8, p. 4]:

As noted by another author, Arsen Artsruni, "An Armenian is one who in his cumulative entity has at least a single element within his overall identity allowing him to declare and admit that he is Armenian. One of those is having and admitting the Armenian ancestors, as well as the idea of nation, regarding that everyone belongs to the nation of his ancestors. This attribute is decisive, in contrast to the one of being an Armenian speaker or a Christian... The roots as a determinant of identity is the most important factor, because many "alienated" Armenians are Armenians because they remember their predecessors to have been Armenian. They have to be always accepted on our part as Armenians, not only when they achieve international recognition. ...Therefore, being Armenian by a home-country resident who understands the roots, does not have to cause any doubt at all" [9, pp. 128, 130], concludes the author.

With regard to this issue, there is another viewpoint put forward by Armen Aivazian, a political scientist, that "An Armenian is one, who adopts Armenia as his unique home country, has a strong psychological attachment to Armenia's land, nation, language and culture, has a feeling of personal responsibility for Armenia's future, and is a carrier of Armenian language and culture" [10]. Thus, according to Aivazian, this and other factors make the Armenian differ from one who is Armenian by origin. He thinks that with regard to the Armenian identity, origin is of an inferior significance, so that the issue of the real national identity is determined in the course of life of the person in question, his personal involvement and the relevant traditions.

Emerging from even a superficial examination of the Armenians problem in Turkey were many facts enabling to talk about some locally maintained national identity, or at least its memory, which, in case of a favorable situation, can theoretically become a basis for their improved organization. It is obvious that within the mass of Crypto (Hidden) and Islamized Armenians living in Turkey there is a tendency to retain the national origins or at least an interest to them. Thus, it is expressed in different manners: efforts at being loyal to both purely ethnic features, and to the principles of the former religion - Christianity. However, for the Armenians maintaining their existence in Turkey, placed at different levels of assimilation and loss of identity, a mandatory and crucial condition for evaluating the elements of ethnic and religious self-consciousness would be to be exactly aware and to account for the environment wherein they live, only outwardly. In Turkey, where being an Armenian or non-Muslim even today is dangerous, retaining a classical Armeniancy is difficult, if not impossible,

all the more so, not only in Istanbul, but also in incomparably more remote underdeveloped western provinces. That is, before "putting a blame" on the apostate Armenians or judging them using the standards of Armenian behavior inside Armenia, all those factors have to be taken into account. As much as only a full or misrepresented secret administration of certain national or Christian elements of customs under a better set of conditions can become a pledge for their possible reconversion. One of the best proofs of retaining the different layers of Armenian self-consciousness is the fact that if a favorable opportunity offers, the Armenians cut off from their roots by violence and force, are trying to return to their roots. The striking example is that among the Armenians at different periods of time, there occur officially registered reconversions. Thus, there were reconversions of Armenians, belonging to different generations, which confirms their retaining the collective and historical memory on their roots. It is also known that an important factor of being Armenian is the mastery of the native language. Meanwhile, it is also known, to what scale the problem of Armenian language nowadays is spread in the midst of the Armenian nation dispersed worldwide. As for the Turkish apostate Armenians one can say that until now they use certain individual Armenian words. There is also another important fact, witnessed personally many times. A manual textbook for learning Armenian in Turkish was spread among Crypto and Islamized Armenians in Western Armenia last year. In Van and Mush, many Crypto and Islamized Armenians showed us that book that had enabled them to learn their native tongue, with great inspiration and somewhat in secret. This fact attest that among the locally based Armenians there is a great desire to learn their native language. However, it is not realistic to require of the Islamized and Crypto Armenians a knowledge of Armenian as a guarantee for being Armenian, with regard to the situation that because of the poor knowledge of Armenian, the preaching in the Armenian Church of Istanbul is conducted in Turkish, and the number of Armenian schools would go down very rapidly, being on the verge of extinction.

It is important to be aware that the issue of the Turkish Armenians is multi-level, that will in turn require a special approach, otherwise resulting wrong conclusions. It is also important to realize that smoothing the differences between different layers of Islamized Armenians in Turkey or showing preference to optimistic or pessimistic approaches is completely wrong. We cannot alienate those who under such a difficult conditions are striving to retain their Armenian elements in a clandestine way. We have already seen multiple former Armenians who have unfortunately been lost for us for good.

The majority of the apostate Armenians in Turkey nowadays has forcedly

adopted Islam, being constrained to choose between life and death under duress, confronted with the choice of life or death. Looking at the presently assimilated Armenians or along that line in Turkey, we often argue about their disputable and complex situation and its definition. It may be assumed that to clarify this issue, one has to consider the following arguments: The Armenians of Turkey are people at different stages of the loss of identity and assimilation, very few of them having a distinct Armenian ethnic image. They can be provisionally divided into two groups: праздник

- Ethnically pure Armenians, who had retained certain elements of the national and religious (Christian) customs, festivals, rituals, forgot the language, but kept, although perhaps in a fragmentary way, some portion of their Armenian self-consciousness. They have been clandestinely trying to retain it and pass it over to the next generations. The partakers of this group are herein provisionally called *Crypto Armenians*.
- Generations of Armenians, whose predecessors have been forced into Islam, most of them know and accept it, however, being severed from the Armenian environment, they have retained very few elements of the national and religious customs, being Kurdish-speaking, Arab-speaking, or Turkish-speaking, while culturally they have become Kurdish or Turkish. This group, e.g., in contrast to the Crypto Armenians, have lost the institute of internal marriages, resulting in their ethnic assimilation as well. To be placed in the same group are also people having a certain portion of Armenian origin, whose grandmothers or grandfathers were Armenians, and the memory of that fact has been kept among them. They do constitute the great army of half-breeds that are constantly in the focus of public attention both in Turkey and abroad. Part of those half-breeds take pride in declaring their partial Armenian origin, meanwhile, there are also people inside that group who for different reasons flatly deny their Armenian origin, moreover, according to some sources, included in their ranks are even extreme Turkish nationalists, members of the "Grey Wolves" organization. We think that this phenomenon has also a specifically psychological aspect, as commented by the aforementioned A. Artsruni. While writing on the negative attitude of the Apostolic Armenians to the Armenians converted to Catholicism, he notes: "By classifying the Catholic Armenians, "Franks", as non-Armenians, we pushed them into becoming Greek, Georgian, Arab… After being banished by the majority of Armenians, some of those "Greeks", "Georgians", or "Arabs" found no reason to forego adopting the Muslim religion or the Turkish nationality. ***In fact that article is a subconscious Armenian revenge through Islamization***" [9, p. 129].

Those groups of apostate Armenians are suppressed both spiritually and psychologically, living in fear, real and sub-conscious, have a double identity, for the outside and the inside world. The relevant specialists study the genocide survivors and their emerging issues, however, we think that the psychological image of converted Armenians should be made subject of special examination.

The Armenians Islamized in the early 20th century and currently living in Turkey have mostly evolved from the following groups:

- During the Armenian genocide, the Armenians who, if only externally, had adopted Islam,
- Armenian girls and women kidnapped during the genocide and married to Kurds or Turks,
- Armenian children forcedly adopted by Muslims during the genocide,
- a certain number of Armenians having found shelter with Muslim neighbors or others,
- a limited number of Armenian craftsmen or exclusive specialists with the knowledge and will of the authorities.

Looking at the Armenians Islamized in the genocide years, some Turkish sources emphasized that many Armenians had adopted Islam willingly. As however noted above, that willingness was in reality a choice between life and death, and so some Armenians preferred to adopt Islam. However, it was not wide-spread, and could not be a widespread phenomenon, since the Turkish state-run machine in 1915 desired to annihilate, rather than assimilate the Armenians. That is also attested by the fact that in the years of the genocide the readiness of Armenians to adopt Islam voluntarily has not always been approved by the authorities. For example, preserved in the archives of the Turkish government were executive orders and instructions from high-ranking Turkish officials of the Interior Ministry headed by Taleat Pasha, demanding to ignore the religious conversion by the Armenians and to exile the Armenians to pre-determined locations.

•••

The problem of Crypto and Islamized Armenians is naturally disquieting and causing some concerns within the Turkish academic and "under-academic" communities, as attested by the ever-increasing research and publications on the subject. However, it is to be noted that all those things can be set up in a broader concept of an "identity crisis", which can be currently regarded as a fairly timely and agenda-oriented issue in Turkey. Turkey has lately been more and more preoccupied with

the issues of national identity. Remarkable in that respect is the idea expressed by the late Hrant Dink on the crisis of identity in Turkey: "If some day Turkey should collapse, it will not be by weapons, but through the identity issue"[1].

The same issue was approached at another angle by the ethnologist Harutyun Marutyan, in whose opinion Turkey refuses to recognize the past, particularly the genocide of Armenians, in order not only to evade losses in finances, territory or morality, but also due to "fear of a possible collapse in national identity, constructed upon decades of negation, that can trigger not only political, but also ethnic disturbances, and may jeopardize the unity of the state under the present-day conditions of multi-ethnicity" [11, p. 60].

It is quite natural that a number of eminent Turkish historians have publicly expressed published their views on the problem of Crypto and Islamized Armenians. One of those, professor Salim Johje, head of the Chair of History, Inonu University, suggested a direct link between the Crypto Armenians and the rally at the Hrant Dink funeral, calling that an awakening mark . He specifically noted: "I think that many of those taking part in Dink's funeral were Crypto Armenians. To my mind, the Turkish Armenians having kept their identity hidden until that moment, going around under the names of Ahmet, Mehmet, at the time of the funeral burst suddenly open, as shown by the statement: "We are all Armenians, we are all Hrants". Thus, the murder of Hrant Dink was actually a revelation for the Crypto Armenians [12, p. 8]. Addressing the same problem was also Chairman of the Turkish Historical Society, Yusoof Halachoghlu, a well-known faker of history, in whose opinion of the 50 000-strong Armenian community of Turkey, in Dink's funeral took part 20 000 Armenians and 10 000 Turks, who raised their voice in solidarity, i.e., about 30 000 people in all. "Where are the rest of them?", asks Halachoghlu, adding: "It is necessary now to study it all so as to know". So, citing the thought by Dink that there are also Muslim Armenians in Turkey, Halachoglu expresses a suspicion that perhaps the rest of the funeral procession were those Armenians, suggesting that this should be assessed by the state investigatory institutions [13].

Some Turkish scholars and analysts consider the Crypto under-cover and Islamized Armenians a serious threat to Turkish security, calling for the state structures to take measures in this direction. Thus, the analyst Mehmet Shevket Eiq shows concern that in the Kars region the Crypto Armenians are buying land plots, which is suspicious. "It is already said that in this country Crypto Armenians live in large numbers, they look like Turks or Muslims, but if they indeed have Armenian identity and consciousness, that would mean that in the

[1] Hrant Dink expressed this idea in the US at a meeting of the Armenian community in 2007 and it is included in the film "Hrant Dink" by the director Hrant Hakobian.

middle of it there is an abnormal situation" [8, p. 105]. The same Salim Johje even suggested that towards 2015 the Crypto Armenians would start a war of terror: "It is interesting to note that in the early 20th century by whatever reason the efforts being carried out with regard of our citizens of Armenian origin in the last eight to ten years have achieved an unprecedented scale. This development could not happen just so, it is clear that lying in its basis are some designs for the future. By the year 2015, holding explanations with the Turks, acts of revenge against them, the objectives of rehabilitating the "Armenian Paradise," all those things by the approach of the 100 anniversary of taking the decision on the exile and deportation, constitute the threats inherent to the problem of Crypto Armenians. Therefore I think that in the future, perhaps around 2013 – 2014, Turkey will undergo a salient or a clandestine assault on the part of the Crypto Armenians, particularly, that will differ a great deal from those in the early last century... I think that the armed movement by the Armenians will start in the cities. Specifically, in whatever city in the East or South-East of Anatolia, to undertake certain actions a colony of 10 – 12 000 is quite sufficient. As a matter of fact, approximately this number of Crypto Armenians is available" [14, p. 24-26].

The Turkish media and analysts often express opinions that the Crypto Armenians are very numerous in state-run institutions, as well as in the private sector. However, the Crypto Armenians are mostly blamed for cooperation with the Kurdish Workers' Party (PKK), that has deployed a terrorist activity against the Turkish state. The apostate Armenians, according to the Turkish sources, play also an important role within other radical left organizations. That problem has again been greatly puffed up by the Chairman of the Turkish Historical Society, the "courtier" historian Yusoof Halachoghlu: on August 18, 2007 at a symposium in Caesaria he declared that the Turkey's Kurds are mostly of Turkmen origin, while the Alevi Kurds are in reality apostate Armenians, who had falsely adopted Islam and changed their names in order to evade the "deportation" in 1915: "Many people today known as Alevi Kurds, are unfortunately apostate Armenians. Many members of the PKK and TIKKO terrorist organizations are those Armenians who try to separate our country. Thus, as we had suggested, the PKK and TIKKO are in actual fact not Kurdish movements" [15]. These words were immediately received with great enthusiasm, both positive and negative, in Turkish media and in the political, academic, and intellectual circles. During widely spread hot discussions, journalists like Mehmet Ylmaz from the Hurriyet paper, used to ask rhetorical question like: why should those Armenians have changed their names and presented themselves as Muslims? [16]. Meanwhile, a popular writer and journalist Murat Belge uttered an idea that by adopting Islam the saved Armenian showed what happened to those who did not take that step

[17]. Trying to counter the wave of criticism to be directed against him, Halachoghlu added that he possessed the list of Armenians and was in control of all data about them. "The details on 100 thousand apostate Armenians are at my disposal, their previous Armenian names, Turkish names, places of residence, etc.", he declared, adding, that it should not be regarded as a threat [18]. According to Halachoghlu, he and his subordinate Turkish Historical Society "is a fortress against the claims of Armenian genocide," and today in his works he is trying to answer to the question by the Armenian party as to where the 1 500 000 Armenians inhabiting those areas before 1915 are. The history faker presents this so-called "scholarly research" on the Armenians as the answer to that question, and pointing at the Armenians' salvation from death by enforced Islamization, states: "Here are those "disappeared" Armenians, they had not been massacred, that means that the Armenian party has been lying all along. My statements completely obliterate the claims of the Armenian Diaspora" [19].

As expected, the Turkish state propaganda is trying in every way to present the issue in their favor, and it will be appropriate to note that presenting the enforced islamization of Armenians in this wrong way, distortion of facts, and drawing illogical conclusions is quite predictable, particularly as viewed by the specialilsts. It is however important to understand that the statements by Halachoghlu are not taken seriously even by some Turkish scholars. It is sufficient to cite the historian Taner Akcham, that "in 1915, some Armenians saved their lives by adopting Muslim religion. They had received permission first, but later, when more Armenians started to adopt Islam, there was a special order banning the apostacy [20]. Meanwhile, Osman Qoqer, former editor of the journal "Toplumsal tarih," noted that Armenians used to adopt Islam not only in 1915, but starting from the time when the Turkic people appeared in Anatolia. Qoqer also rejects the statements by Halachoghlu, saying that it is at least not serious to think that Armenians could get saved by this simple method, that is by declaring themselves Kurdish or Alevi. According to him, the state knew in detail, which villages were Armenian and which were Kurdish. Qoqer also states that Islamization of Armenian women and orphans was a component of the state policy at that time [21].

As for the presence of apostate Armenians among Kurdish Alevis and Zazas, it is to be noted, that there are facts approving this statement and during the years of the Armenian genocide a lot of Armenians (about 20 to 40 thousand) found refuge with the Alevis of Dersim [22, p. 75]. The choice of Dersim was probably due to the fact that the Ottoman army, engaged in war, could not control this area too closely (because of the war going on at the time), enabling the local population to give them refuge. It is to be noted that the refuge to the Armenians

